

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

28  
m. 26

12385

Ի. ԹԵՐԵԼՈՎԿԻՑ  
✓

# ՄՏԱՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ


---

ԽԾՀԻՐ ԺՈՒՅՎՈՒՐԴ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉ.՝  
ՄՊՈՎԿՎԱ.

1931

028  
R-26

06 JUN 2009  
32 ✓



# ՄՏԱՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

(ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ԳՐքԻ ՑԵՎ  
ԼՐԱԳՐԻ ՎՐԱ)

ԽԵԶԻՐ ԺԱՂԱԳՈՒՐԴԻ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՄԱԿԱՀ.  
ՄՈԽԿՎԱ. 1931

24 JULY 2013  
8551700000

## I. ՄՏՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶԻՐԱԿԵՐՊՈՒՄԸ

Աշխատանքի պլանը՝ Անհատական և կոլեկտիվ մտավոր աշխատանքը ուղիղ կազմակերպել չի կարելի միայն խիստ վորոշումներով ու կարգադրություններով. — «մինչև այս ժամը այս ինչ գործը վերջացնել», «ամսի 15-ին այսինչ աշխատանքը ավարտել»: Այդպիսի «հրամաններ» հաճախ «տրվում են» սրան - նրան խարելու համար, յերբեմն նույնիսկ ինքնախարեյության համար, և ի հարկե — վոչ մի ոգուտ չեն բերում:

Մենք գիտենք, զոր ամեն մի կազմակերպություն պետք ե ունենա իր ընդհանուր պլանը, ուրեմն և մտավոր աշխատանքի ուղիղ կազմակերպման համար ևս պահանջվում ե աշխատանքի պլան:

Իսկ ինչ ե աշխատանքի պլանը, Դա ձիւմ հիմնավորված ցուցակն ե այն աշխատանքների, վոր դու յենթադրում ես կատարել նախապես սահմանված վորոշ ժամանակամիջոցում: Աշխատանքների այդպիսի ցուցակ կազմելու համար

Главлит № A-77.167 ՀՅ 3093-63  
Заказ № 2879 Тираж 4.000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.



պահանջվում ե նախ՝ սահմանել ձեռնարկվող աշխատանքի վերջնական նպատակը, յերկրորդ՝ վորոշել այդ աշխատանքների ճշգրիտ ծավալը, յերրորդ՝ ճիշտ կերպով հաշվի առնել աշխատանքի պայմաններն ու հնարավորությունները և, վերջապես, սահմանել յիշել կարելի յե այսպիս արտահայտվել՝ աշխատանքի «չափը», վոր դու կարող ես կատարել մեկ ժամում, մեկ շաբթում և այլն:

Ենդնից շատերը յերեխ շատ անգամ են փորձել իրենց աշխատանքի պլանը կազմելու ի դա ճշուրեն կատարելու, բայց այդ նախաձեռնությունը ամեն անգամ վերջացել ե անհաջողությամբ, և ձեզնից շատերը իրենց հույսը նույնիսկ կտրել են՝ թե կարող լինեն յերբեցից վորոշ պլանով աշխատելու:

Ի՞նչո՞ւ յե այդպիս լինում: Ի՞նչն և ձեր անհաջողությունների պատճառը:

Մեզ թվում ե, թե ձեր անհաջողությունների պատճառը գլխավորապիս այն ե, վոր դուք սիսակ մոտեցում ունեք դեպի պլանը, ճիշտ չեք կազմում ձեր աշխատանքների պլանը:

Յերբ դուք կազմել եք ձեր աշխատանքների պլանը, դուք յերեխ ուղղակի նշել եք, թե դուք ինչ պիտի անեք մեկ որվա, մեկ շաբաթվական:

ամսվա ընթացքում, բայց ձիշտ հաշվի չեք տուի գրա համար անհրաժեշտ ժամանակամիջոցը, ձեր առողջական դրությունը՝ բնակարանային պայմանները և, վոր ամենագլխավորն ե՝ աշխատանքի այն քանուկը, վոր դուք ի վիճակի կինույթք կատարելու տվյալ ժամանակամիջոցում. մի խոսքով այն, ինչ վոր դուք կոչում եք աշխատանքի «չափ»:

Կ ատար ած գործի նորման, իսկ ինչպէս սահմանել այդ աշխատանքի «չափը», նորման:

Այստեղ պետք ե ոգտվել Աշխատանքի գիտական կազմակերպման հիմնական մեթոդով: Այդ փորձված մեթոդը մեծ ոգուտ կտրը:

Սոորյա կյանքից վեցըրած մի հասարակ որինակով պարզենք այդ: Յենթագրենք թե մենք ձեռնարկել ենք քաղաքանականության կուրսի ֆակեմանը և մեզ համար անհրաժեշտ ե վորոշել, թե քանի ժամում մենք պետք ե այդ կատարենք, ուստի և պետք ե կազմել մեր աշխատանքի համապատասխան պլանը: Դրա համար մենք, չփոխելով սովորական պայմանները վորոնց մեջ մենք աշխատում ենք այժմ և յենթագրում ենք աշխատել նաև ապագայում, փորձում ենք՝ ժամացոյցը ձեռքներիս՝ մի քանի ժամ աշխատել տվյալ տուարկայի (քաղաքանակե-

սության) վրա և ստիմանում հնք, վոր մեկ ժամվա ընթացքում մենք կարող ենք մշակել, որինակը հինգ յերես։ Սակայն այդ հինգ յերեսը ընկունել վորպես «կատարված գործի նորմա», — մենք դեռևս իրավունք չունենք, մենք պետք են հաշվի առնենք այն, վոր մենք նոր հնք սկսել տվյալ առարկան ուսումնասիրել մենք դեռևս անձանոթ ենք նրա կառուցման մեթոդին, նրա շարադրանքի առանձնահատկություններին, և դա ի հարկե, դժվարացրել ե մեր աշխատանքը և համապատասխան չափով պակասացը կը յերեսների այն քանակը, վոր մենք կարող կլինեցինք մշակել մեկ ժամվա ընթացքում, յեթե չկինեցին վերոհիշյալ առանձնահատուկ հանդամանքները։ Մյուս կողմից, առարկան, անկասկած, մեղ գրավեց իր նորությամբ, իսկ այդ հանդամանքը ավելացրեց յերեսների այն քանակը, վոր մենք կարող եցինք մշակել մեկ ժամվա ընթացքում նորմա՝ պայմաններում։ Յեվ վորպեսպի կարողանա՞ք քիչ թե շատ ճիշտ վորոշել այդ աշխատանքի (քաղաքատնտեսության) «կատարման նորման», մենք պետք ե գեռ փորձենք տվյալ առարկայով զբաղվելու մի շարք որեր մի քանի ժամ շարունակ, ապա այդ ժամանակամիջոցի ընթացքում մեր մշակած յերեսների ընդհանուր

քանակը բաժանենք ծախսված ժամերի ընդհանուր քանակի վրա և ստացված թվով մենք վորոշած կլինենք կատարված գործի նորման տվյալ պայմաններում։ Ի հարկե, այդ նորման ժամանակի ընթացքում կաձի՞ վորքան շատ եք դուք զբաղվում քաղաքատնտեսությամբ, այնքան նա դյուրանում և ձեզ համար, այնքան շատ յերեսներ եք մեկ ժամում դուք մշակում, սակայն դա չի հակառակ առաջանական անհրաժեշտությանը։

Սոտավորապես այդ ձեսի ել դուք սահման ում եք «նորմա» նաև ուրիշ առարկաների վերաբերմամբ, մեր մտավոր աշխատանքի ուրիշ տեսչությունների վերաբերմամբ։

Ժամանակի հաշվառումը. Յերբ դուք այդ կատարած կլինեք, անցեք առհասարակ ձեր ժամանակի ուսցիոնալ ոգտագործման միջոցներին։ Ժամանակի ուսցիոնալ ոգտագործումը՝ շատ կարենոր տեղ և բռնում առհասարակ մտավոր ոչխատանքի ուղիղ կազմակերպման գործում և, մասնավորապես, ամենորյա աշխատանքի պլան կազմելու խնդրում։

Ժամանակի կիրայի հիմնական լոգունքը առում ե՝ «ժամանակի մեխանիզմը նախ բաց արա և ապա բարենորոգիր»։ Փորձենք բացատրել այդ լոգունքը և մեր առաջ կկանգնի շատ կարևոր

իսորհուրդ՝ «քո ներկա «ժամանցի» ձեզ հիմովին փոխել մի սկսիր», քո ժամանակի ռացիոնալ ողտակործման «փայլուն» պլաններ մի գծիը ապարացի համար, ինքդ քեզ նակազներ ու հրամաններ մի տուր այն մասին, թե յերբ վեր կենաւ յերբ հանգստանալ, «ինչքան ժամանակ գործ դնել ճաշելու համար, տուալետի համար» և այլն, քանի գեռ դու մատիտը ձեռքիդ հաշվի չես առեւ թե դու այժմ ինչպես ես ծախսում քո ժամանակը:

Ժամանակի ծախսման հաշվառումը կատարվում է հատուկ թերթիկների սպառովյամբ:

Ամեն որ լրացրեք այդ թերթիկները, այդուղ մանրամասն նշանակեցիք ձեր փասարեն ծախսոված ժամանակի մասին, բայց ի հարկե դա բարկան չեւ:

Ժամանակը սացիսանալ կերպով ծախսելու առաջն քայլը պետք է համարել ժամանակի ծախսման նախապես կազմած պլանը:

Գրանցումն — առաջին քայլն ե, պլան կազմելը — յերկրորդ քայլն ե, իսկ պայքարը այդ պլանի լիովին կատարման համար — յերրորդ և վերջին քայլն ե՝ ձեր և ուրիշի ժամանակը իրոր ուղիղունակ ծախսելու ճանապարհն:

Գրանցումն. Մտավոր աշխատանքի ուղիղ կազմակերպման համար մեծ նշանակություն ունի

նաև ժամանակին նկատողության առնելն այն ամենը, թե գու ինչ պետք է անես այսօր, այս շաբթին, այս ամսին, այս տարի, և այնուհետև կոնտրոլի յենթարկես, թե արդյոք հատարել ես նախագծածը, իսկ յեթե չես կատարել՝ ապա ինչնու:

Սովորողների, պրոպագանիստների համար անհրաժեշտ են, մանավանդ աշխատանքի սկզբում, ավելի պրիմիտիվ ձեռնարկներ: Աշխատանքի սկզբում ամեն տեսակի նկատողությունները կարելի յե զրի առնել մեկ ընդհանուր տեսրակում: Այդ նպատակի համար ընդհանուր տեսրակը (20—30 յերեսանոց) պետք է ստորաբաժանել չորս մասի — «պարապմունքների մշտական ցուցակ», «շաբաթական պարապմունքների ցուցակ», «ինչ պետք է անեմ այսոր», «ինչ եմ մտազիր անելու մուռակա ապագայում»:

Պայետք և մոռանալ վոր դա պլան չե — դա ընթացիկ աշխատանքների պրակտիկ գրանցումն է միայն:

Ընդհանուր կանոններ «պարապմունքների մշտական ցուցակ» կազմելու մասնից առաջ հարկավոր և սովորողներին և ապա պատասխանատու այն աշխատավորներին, վորոնք, ասենք, կետարված ընթացքում մրկնույն որերը վորոշ պա-

Պարապմունքների մշտական  
ցուցակի որինակ

Մեկ դեկտեմբեր	Ժ ա մ ե ր			
	10—12	1—3	5—7	8—10
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

բաղմանք են անհնում: «Մշտական ցուցակ» կազմելը շատ հեշտ է: — սովորողները, որինակներող են ռեզակի արտագրել դասացացակից:

II. «Մշտական ցուցակը» — դա իր տեսակի տեղական քարտեզ է, քաղաքի պլան, վոր տալիս և ընդհանուր գաղափար, ընդհանուր արյենտիրովակ: Մանրամասնությունները այստեղ չկան:

III. «Մշտական ցուցակից» մենք քաղում ենք հիմնական մատերիալը՝ գեկադային ցուցակ կազմելու համար:

IV. «Մշտական ցուցակի» մեջ նշանակում են միայն զբաղված ժամերը, այստեղ չեն ցուց տված թե ինչով պետք է պարապել զբաղված ժամերի արանքում:

V. «Մշտական ցուցակը» կազմվում և առաջուց՝ կես տարվա կամ նույնիսկ ամբողջ տարվա համար: Ամենից լավն է այդպիսի ցուցակ կազմել վոչ թե ուսումնական տարվա, կամ «աշխատանքային» տարվա հենց սկզբում, այլ 1—2 գեկադանց, յերբ զգալի կլինին աշխատանքի ավելի կայուն կարգեր:

VI. Ցեթե «մշտական ցուցակի» մեջ մտցվում են փոփոխություններ — կատարվում են ժամերի տեղափոխություններ, փոխվում են պարապմունքի առարկաները, — ավելի լավ և ամբողջ

ցուցակը արտազրել ահետքակի մյուս ժաքուր յերեսում. այդ նպատակի համար ել վերոհիշյալ ընդհանուր տեսքակի մեջ 10—15 յերես հատկացվում են «պարագմունքների ընդհանուր ցուցակին»:

VII. Նշանակելով ժամերն ու պարագմունքի անունը, ցանկալի յե համառոտակի գրել առղիտորիայի Ն-ը, ուր և լինելու պարագմունքը, և դասախոսի ազգանունը՝ կամ հիմնարկության (կամ կազմակերպության) հասցեն, և տվյալ ժողովի և այլն մշտական նախադանի ազգանունը:

Ընդհանուրը՝ կանոնները «գեկադային ցուցակ» կազմելու ժամերն. I. «Դեկադային ցուցակ» կազմելը նպատակ ունի ճիշտգործակար տալ այն բոլոր աշխատանքների մասին, վոր պետք է կատարվի 10 որում, և ժամանակին հիշեցնի, թե վայր աշխատանքը վոր որը կամ վոր ժամին պետք է կատարել:

II. «Դեկադային ցուցակը» կազմվում է ամեն մի գեկադի նախօրյակին:

III. «Դեկադային ցուցակի» մեջ մտցվում են քիչ թե շատ տեսական բնույթ կըող աշխատանքներ, — աշխատանքը կըուժուի, անձնական դեկուցումներ, ժողովներ համախելը, գեկուցումների համար պատրաստվելը և այլն. Իսկ հերթական անհիբները, ինչպես են՝ այս կամ այն գիրքը

ձեռք բերել կարգալ այս կամ այն հոգֆածը լրագրում, այցելել այս կամ այն աշխատակցին, ստուգել անհրաժեշտ բան այս կամ այն աշխատանքի վերաբերյալ և այն — զրանք մտցվում են այն թերթիկի մեջ վոր կրում և այս ընդհանուր անունը — «ինչ պետք է անեմ այսոր»:

IV. «Դեկադային ցուցակի» մեջ մտցվում են ամենից առաջ նախապես ընտրված նշումներ՝ «Ճշտական ցուցակից», այնուհետև այնպիսի գործեր, վորոնք այս կամ այն պատճառով կատարված չեն յեղել անցյալ գեկադին, բայց վորոնք անպայման պիտի կատարվելին, և վերջապես՝ հերթական անելիքները տվյալ գեկադի ընթացքում:

«Ի՞նչ պիտի անեմ այսոր». Այս բաժինը կազմվում է շատ պարզ. տեսքակի յերեսները ստորաբաժանում են յերկու մասի — մի մասը մեծ, վորի վրա մենք համառոտ նշանակում ենք մեր անելիքի բովանդակությունը, իսկ մյուսը — վորքը, վորի վրա նշանակում ենք թե արդյոք կատարված և պատվերը, իսկ յեթե չի կատարված — ինչու:

Այսուեղ են մտցվում նաև, ինչպես քիչ վերենցինք, այն փոքրիկ դատապատ պատվերները, վորոնք հարմար չեն մտցնել դեկադային պարագմունքների ցուցակում:

Դեկտային ցուցակի որինակ

Աշխաթիվ	Ժամ	Ուր լինել ինչ անել	Աշխաթիվ	Ժամ	Ուր լինել ինչ անել
1	10—12		6	10—12	
	12—2			12—2	
	4—6			4—6	
	8—10			8—10	
2			7		
3			8		
4			9		
5			10		

«Ի՞նչ պիտի անեմ այսոր» գրանցումը կազմվում է աշխատանքային որվա նախորյակին, սակայն այդ գրանցման համար հարկավոր տեղը պատրաստվում է մի քանի որ առաջ, վորովիետն հաճախ անհրաժեշտ է լինում, որինակ, ամսի մեջին նշանակել այն, թե ինչ պետք է անել ամսի գործ.

Շատ հաճախ ստիպված են լինում այդ գրանցումը լրացնել այն աշխատանքային որվա ընթացքում, վորի համար նա կազմված է, վորովիետն աշխատանքի պրոցեսում կարող են հայտնվել այս որվա համար նորանոր անելիքներ:

«Ի՞նչ պիտի անեմ այսոր» գրանցումը հարկավոր է վոր աչքիդ առաջը լինի՝ գրասեղանիդ վրա, կամ միշտ մոտդ պահեն, վոր ուրել վոր գնամ՝ նա միշտ քեզ հիշեցնի, թե այդտեղ ինչ պիտի անես:

Զկատարված գործերը պետք է փոխազրել հետևյալ որվա ցուցակի մեջ, մինչև վոր նրանք կատարվեն:

Ցուցակի մեջ կատարած խնդիրների դիմաց պետք է նշանակել պյուս (+), իսկ չկատարվածների դիմաց՝ մինուս (-). Յերբեմն մինուսի կողքին պետք է նշանակել նաև պատճառը, թե ինչու պատվերը չի կատարված, իսկ այդ պատճառը վերացնելու համար՝ նշանակել մեկ կամ մի քանի նոր խնդիրներ:

Ինչ եմ մտադիր անելու մոտ ապագայում. Այդ բաժնում գրանցում անելը հսկայական նշանակություն ունի. Մենք գիտենք, վոր ժամանակին գրի չառնված պիտանի միտքը — «կորցված գանձ ե», ուստի և անհրաժեշտ մտքերը, վերհիշելու համար, պետք է գրի առնել:

Այդ բաժինը ևս սովորաբար կազմվում է վոչ  
թե վորոշ ժամերին ու որերին, այլ աշխատանքի  
պրոցեսում, որինակ, մի զեկուցում լսելիս, քո  
մեջ մի միտք ե հղանում ծանոթանալ այս կամ  
այն հարցի հետ, և այդ միտքը գու զբի յես առ-  
նում. և կամ մի հոգված գրելիս դու անհրաժեշտ  
ես գտնում գրել նաև մի ուրիշ հոգված՝ շոշափած  
խնդրի հետ կապված, և չմոռանալու համար դու  
այդ նշանակում ես:

Հաճախ պետք է նայել այս բաժնում արված գրանցումներին և հարկ յեղած բանը փոխադրել զեկադային ցուցակի մեջ:

Աշխատանքի տեղը. Մտավոր աշխատանքով պարապողի համար սեղանն ու աթոռը ևս նշանակություն ունեն. Դրանք պետք են լինեն պարապողի կազմվածքին համապատասխան (վոչ բարձր են վոչ ցածր). Սեղանը պետք է ազատ լինի և նրա վրա ավելորդ բաներ թափթփված չլինեն: Տվյալ միջոցին սեղանի վրա պետք են լինեն միմիայն այն, ինչ անհրաժեշտ են պարապունքի համար:

## II. ԻՆՉՊԵՄ ՊԵՏՔ Ե ԿՈՐԴԱԼ.

Ցերեք տեսակի մոտեցում դեպի գիրքն ու լրագիրը, Նայած թէ մարդ ինչ

նոյատակով և ձեռքի վերցնում գիրքը կամ լրա-  
գիրը, նա դրանցից ոգտվելու համար զանազան  
միջոցներ և ընտրում:

Ցեթե պետք ե միայն ընդհանուր գաղղափար կազմել զրքի մասին, միայն թուոցիկ կերպով ծանոթանալ նրա բռվանդակությանը, — բավական կլինի միայն թերթել գիրքը։ Դա կատարվում է այսպես,

Գրքի առաջաբանը կարդալով և իմանալով,  
թե ինչ նպատակով ե գրված, ինչ նյութի մա-  
սին, զիրքը ինչ մեթոդով ե կառուցված և զոր-  
պիսի ընթերցողի համար, — պետք ե կարդալ բո-  
վանդակությունը, նայել առանձին գույխների  
վերնագրերը, մեջ ընդ մեջ թերթեր, նայել ծանո-  
թությունները, — այդ բոլորը հնարավորություն-  
ե տալիս քիչ թե շատ գաղափար կազմել գրքի  
բովանդակության մասին. այնուհետեւ պետք ե-  
սկզբեց ու վերջից կարդալ մի քանի յերես՝ ծա-  
նոթանալու գրքի վոճի հետ. Լրագրում կամ  
ժուրնալում տվյալ գրքի մասին գրախոսականը  
և կարդալով — կարելի յի ասել զոր գրքի մա-  
սին հնարավոր կինդի թուցիկ գաղափար կադ-  
մել (թե ինչի մասին և իսութում)։

Մոտավորապես նույն ձևով են վարդապետ և առաջընթացի համար իրավունքը ընթացիկ համարի հետ ժամացիկ կերպով -



ծանոթանումը. համար. — նախ նայում են լրագրի, համարի բովանդակությունը, այնունեան լրագրերը բաց անելով պետք ե աչքի անցկացնել հեռագրերի, հոդվածների, թղթակցությունների, վալորտմաների վերնագրերը, մի քանի ըստե կանգառնելով այն նյութերի վրա, վոր առանձնապես հետաքրքրական են թվում և կամ այն տեղեկությունների վրա, վորոնք խոստանում են վաղուց հասունացած գեպքերի լուծումը. Դրանից հետո, լնարտություն անելով պետք ե կարգալ առաջնորդողը կամ յենթառառաջնորդողը, վոր սովորաբար ընդհանուր տոն և տալիս լրագրի համարին:

Դրքերն ու լրագրերը թուցիկ կարգալու ձեից պետք ե ոգագել խիստ զգուշությամբ: Յեթե դա գրքից ոգագիրը հիմնական կտմ միակ ձեն ե, — դա անկասկած մասսակար ե, վորովհետեւ դա մարդուն զարձնում և ամենիմաց — դիելետանտ և նրան յետ և սովորեցնում լուրջ աշխատանքից: Այլ մեթոդը ոգտակար ե միայն վորպես յերկորդական լրացուցիչ միջոց, վոր մեզ հնարավորություն և տալիս ալահապանելու. հետեւյալ խելացի կանոնը — «վորոշ բանի մասին ամեն ինչ գիտցիլ և մի քիչ ել գիտցիր ամեն ինչի մասին», և մեզ հնարավորություն և տալիս գրքերի հսկայական քանակից տվյալ հարցի մասին ընտրելու

հենց այն, ինչ մեզ պետք ե: Չե վոր բազմաթիվ գրքեր են լրոյս ահսնում վոչ միայն զանազան բնագավառների վերաբերյալ այլ նույնիսկ այն նեղ բնագավառի վերաբերյալ վորով ընթերցողը հետաքրքրվում է: այդչափ գրքեր կարդալու ու մարսնելու վոչ մի հնարավորություն չկա և յետ չմնալու համար մնում ե միակ միջոցը — գրանք նայել թուցիկ կերպով:

Տվյալ գրքի բովանդակությանը քիչ թե շատ մանրամասնորեն ծանոթանալու, իմանալու համար, թե զիրքը ընդհանուր առժամբ ինչ նոր բան և տալիս և ամբողջ գրքին ընդհանուր գուահատություն տալու համար — պետք ե գիրքը մեկ անգամ ամբողջովին կարգալ: (Մենք այդպես ինք կարգում համեմատաբար նոր՝ պոպուլյար գիրքը՝ ծանօթ բնագավառին վերաբերող, ավելի ևս հաճախ մենք այդպես ենք կարգում նաև բելկեարիստիկան): Գրքերի վրա զանազան նոտիսներ (նկատողություններ, մակագրություններ) անելը մի առանձին զգալի հետեանք չի տալիս. ավելի շավ եկա կարդացած գրքի մասին մի անկետաթերթ կազմել ու դա լցնել վորպեսզի գրավոր մի հետք մնա, յեթե առագայում այդ գրքի կարքը զգացվի: Յեղ այսպես, գրքից ոգտվելու յերկրորդ միջոցը — գիրքը մեկ անգամ ամբողջովին կարդալու

ե. գրքի մշակումը առայժմ չկա: Ուստի և վոչ տուաջին և վոչ յերկրորդ մեթոդը չեն կարող բավարարել այն ընթերցողին, վորը ցանկանում է նյութին տիրապետել այն չափով, վոր ինքը հնարավորություն ստանա դա ուրիշներին տալու, վոր ինքը գրքին մոտենա վորպես մի այնպիսի աղբյուրի, վորտեղից նա քաղում և մտքեր ու փաստեր՝ իր սեփական աշխատանքի համար, և ով մտադիր է վերջապես քննադատորնեն մոտենալու գրքին: Այդպիսի ընթերցողը պետք է ոպովի գիրքը մանրամասնորեն մշակելու միոդով:

Գրքի այդ կերպ մշակումը կատարվում է տարբեր ձեռքով. — Կարելի յե հենց գրքի մեջ մատիտով նոտիսներ անել (ինարկե, յեթե գիրքը իր սեփականն ե), կարելի յե և գրքից իր աշխատանքի համար անհրաժեշտ հոդվածներ դուրս գրել, վերջապես կարելի յե ուվյալ գրքից կանոնական կազմելը. Սյդ բոլոր մեթոդների յասին մենք կիսունք ստորե, իսկ առայժմ կանգ առնենք այն հարցերի վրա, վոր վերաբերում են ընթերցման ողիղ կազմակերպմանն ու հիգիենային:

Ընթերցումը. Հաճախ կարելի յե լսել այսպիսի գանգատաներ. — յես կյանքումն համե-

մպտաբար շատ եմ կարգացել բայց վոչինչ չգիտեմ, կամ շատ քիչ բան գիտեմ: Դա ինչո՞վ բացատրել:

Այստեղ պատճառները շատ են: Նկատենք միայն գլխավորները:

Ընթերցումը շատ քիչ և արդյունավետ, յեթե ընթերցողը գիրքը ձեռքը գերցնելով, ընթերցման նպատակը իրեն համար պարզած չի լինում: Կան այնպիսի ընթերցողներ, վորոնք ամեն ինչ «կլանում» են միանգամից, — այսոր՝ կենինի «Պետությունը և հեղափոխությունը», վաղը՝ Ֆլամարիոնի «Աստղաբաշխությունը», այնուհետև «Քիմիա» ու վիպագրությունները: Այդպիսի ընթերցողի գլխում ամրողական վոչինչ չի մնա, քանի վոր գրքերի ընտրանության խնդրում նա վոչ մի սիստեմ չի ունեցել, նրա կարգացած գրքերի միջև տրամարանական վոչ մի կապ չի յեղել:

Առաջին պահանջը, վոր մենք ներկայացնում ենք ընթերցումը ուղիղ կազմակերպելու համար, — հետեյան ե, ընթերցանության գրքերի ընտրության մեջ անպայման պետք ե խիստ սիստեմ պահպաներ:

Այդ սիստեմը կարող է սահմանել գրագարանապետը, կոնսուլտանտը՝ ակումբում կամ կուս-

կարինետում, կուրսերի դասաւուն, կամ խմբակի ղեկավարը, հեռակա կուրսերի ոեցինզենտը, և վերջապես, այսպես կոչված «համբ ոգնական-նիշը» — այս կամ այն կրթական հիմնարկության ծրագիրը կամ վորեն հարցի վերաբերյալ ծրագիրը, բիբլիոգրաֆիական դասական գրացուցակներ և այլն:

Վոմանք անալայման իսկույն ուզում են կարդալ «մոդայի» գրքեր, վոչ թե այն պատճառով, վոր այդ գրքերը ուստակար են, ավելացնում են մարդու գիտելիքները և այլն, այլ այն պատճառով, վոր դրանք «մոդա» յեն, դրանց մասին «խոսում» են ամենքը: Այդպիսի ընթերցումը ընթերցողին կարում ե այն թեմայից, վորի վրա նա աշխատում ե, կասեցնում նրա ուշադրությունը անհրաժեշտ առարկայից, խանգարում սիստեմը: հետևանքն այն ե լինում, վոր նման ընթերցումը ընթերցողին փոխանակ ոգնելու և նրա մեջ ուղիղ աշխարհայացք կազմելու (իսկ ընթերցանության գլխավոր նպատակն այդ ե), — նրա մեջ ստեղծում ե քառոս: Ուրեմն յերեք թույլտրելի չե «մոդային» հետեւել — դա կործանիչ ազգեցություն ե ունենում մարդու սրբինկայի վրա և նրան վոչ թե դարձացնում ե, այլ ընդհակառակը:

Նոյնչափ զնասակար և ոգութել և այնպիսի գրքերից, վորոնցից խելքի բան չի կարում կամ քիչ ե կտրում, այսինքն, վորոնք չեն համապատասխանում ընթերցողի պատրաստությանը: Նման դժվար գրքերը ընթերցողին հուսահատեցնում են, ուստի և նա առաջ գնալ չի կարողանում ու սկսում ե չճավատալ իր ուժերին, հաճախ բոլորովին հրաժարվում ե աշխատանքից տվյալ բնագավառում: Իսկ չափազանց հետ գրքերն ել վոչինչ չեն տալիս ու ընթերցողի մեջ շատ զնասակար կարծիք են առաջ բերում — վորովես թե ինքը ամեն ինչ գիտե: Ընթերցանության համար մեր ընտրած գրքերն իրենց բոլանգակությամբ և շարադրանքի իրենց ընույթով պետք ե լինեն այնքան լուրջ, վոր մեզ ստիպեն մի քիչ մեր «ուղեղը շարժել», պտրտել ոժանդակ գրքերը, յերկու-յերկը անգամ կարդալ հարկավոր մատերյաները, մի խոսքով լուրջ աշխատել դրանց վրա և հաջողությամբ:

Պետք ե կարդալ սիստեմատիկ կերպով: Վասե, յերբ ընթերցողը մեկ-յերկու շաբաթ շարունակ կարդում ե որական 10—12 ժամ և մեկ ել տեսար — մի ամբողջ ամիս ձեռքը գիրք չի վերցնում: Այդպիսի ընթերցումը այնպիսի հետեւանք է ունենում, վոր ձեռք բերած գիտելիքներից

շատ բան հետպհետեւ մոռացվում և և նոր ձեռք  
բերվելիքը հիմք չի գտնում ասոցիացիայով կա-  
պակցվելու համար։ Ընթերցողի գիտակցության  
մեջ մնում ե վոչ թե մի վորեն բանի վերաբերյալ  
ավարտված լրիվ պատկեր, այլ անջատ-անջատ  
տպավորություններ, իրար հետ չկապակցված  
«տեղեկանքներ»։ Այդ հետեւանքներից ազատվելու  
համար ընթերցանության մեջ հարկավոր ե խիստ  
սիստեմ պահպանել ավելի լավ և որական կար-  
դալ յերկու ժամ, քան շաբաթական մեկ անգամ  
շարունակ տասը ժամ, ավելի լավ և որական  
կարդալ 10 յերես, քան յերկար ընդհատումից  
հետո միանդամից կարդալ 100 յերես։ Միայն  
սիստեմատիկ ընթերցումն և տալիս լավ  
պտուղներ։

Վերջապես, գեպի գիրքը չի կարելի պասսիվ  
վերաբերվել առանց քննադատության ընդունե-  
լումի գրքի մեջ պարունակված մտքերն ու փաս-  
տերը, առանց քննադատության յենթարկելով  
գրքերի հեղինակների իդեոլոգիան։ Կարդալիս  
անհրաժեշտ ե ակտիվ կերպով ստուգել գրքերի  
տվածը, «վիճել նըանց հետ», նըանց համեմատե-  
լով իրար հետ և նրա հետ, ինչ վոր կա իրակա-  
նում։ Վորպեսզի գրքերի ընթերցումը իսկապես  
լրացնի մեր գիտելիքները ու լայնացնի մեր աշ-

խարհայեցողությունը, — անհրաժեշտ ե ակտիվ և  
վոչ թե պասսիվ ընթերցանություն։

Այժմ անցնենք զուտ առողջապահական կարգի  
խորհուրդներին։

Ընթերցանության հիգիենայի գլխավոր կանոնները  
չպահպանելը առաջ և ըերում աշխատանքի մեջ  
թուլություն, ժամանակից առաջ հոգնածություն,  
գլխացավեր և վորպես այս բոլորի հետեւանք,  
ամեն տեսակի ներվագին հիվանդություններ։  
Ընթերցանության հիգիենայի կանոնները իմա-  
նալ և ըստ հնարավորին զրանք կատարել —  
գրքի և լրագրի վրա աշխատող յուրաքանչյուր  
մարդու պարտականությունն եւ Ահա այդ հիմնա-  
կան կանոնները։

Ամենից առաջ նկատենք, վոր չի կարելի գիրքը  
կարդալ պառկած (միւնույն և՝ կողքի թե մեջքի  
վրա). պառկած դրությամբ կարդալիս լույսը  
գրքի վրա կանոնավոր չի ընկնում, ընթերցողը  
գրքին սովորաբար նայում և մեկ աչքով, իսկ  
մյուս աչքով կկոցում ե, իսկ այդ ամենի հետե-  
վանքն ե լինում տեսողության թուլություն ու  
կարծատեսություն։

Զափականց մնասակար և գիրքը կամ լրագրը  
կարդալ քայլելիս կամ տրամվայում, վորովհետեւ

այդ գրաւթյամբ կարդալիս նախ լույսը անհավասար ե ստացվում գրքի վրա, վոր աչքերին խիստ մնասակար ե, և յերկրորդ՝ շարունակ վախենում ենք, վոր չլինի մեկին դիպչենք և այլն, իսկ այդպիսի գրությունը ավելի յէ հոգնեցնում, քան լուրջ աշխատանքը:

Ամենից լավն ե՝ գրքեր ու լրագրեր կարդալ որվա բնական լույսի տակ, իսկ յեթե ստիպված ես ոգտվելու արհեստական լույսով, ապա պետք ե ուշադրություն դարձնես, վոր լույսը լինի բարվար (մինիմում 25 մոմ  $1\frac{1}{2}$  մետր տարած, սեղանի վրա, վոչ ավելի, քան 35 սանտիմետր բարձրությունից), վորպեսզի լույսը չլինի շատ ուժեղ ու ճառագայթները ուղղակի չընկնեն ընթերցողի աչքին (գրա համար պետք ե գործածել մատովի լամպոչկաներ կամ լուսամփոփ՝ ավելի լավ և կանաչ գույնի), վորպեսզի լույսը չդողդողա և վորպեսզի լույսի աղբյուրը գտնվի ընթերցողի ձախ կողմում և առջեր, և վորպեսզի գրքի վրա չընկնի մարմնի կամ զրոյ ձեռքի սովորը:

Մաքսիմալ կենտրոնացման համար շատ ոգտակար ե, վորպեսզի լույսը ընկնի սեղանի միայն այն փոքրիկ մասում, ուր տեղի յէ ունենում աշխատանքը, իսկ շուրջը լինի կիսախավար:

Ընթերցանության միջոցին գիրքը ընթերցողի աչքերից պետք ե լինի այնպիսի տարածության վրա, վոր նաև ստիպված չլինի նրա վրա կուանալ (ամենից լավ ե, յեթե գիրքը դանվում ե մի քիչ ավելի թեք գրությամբ, ինչպես հաշվապահի կանորրկան):

Գրքի կամ լրագրի վրա աշխատելիս շուրջդ պետք ե կատարյալ լուսություն տիրի: Պետք ե աշխատել, վոր չլինեն վոչ միայն խլացուցիչ ալմուկ կամ դրդյուն, այլև չպետք ե լինի հասարակ շշուկ, որինակ, վենտիլյատորի կամ տրամվայի ձայն և կամ կամացուկ խոսակցություն: Զպետք ե մոռանալ, վոր աղմուկը, նայած թե նա ինչ չափի յէ, պակասեցնում ե մեր աշխատունակությունը 30—50 առկոսով: Աւստի և գրքի վրա աշխատելիս պետք ե պատռհանները փակել (սենյակի ողը մաքրելոց հետո), ձայն անցկացնող բարակ պատերը ծածկել քեչայով կամ գորգով, վճռականապես արգելել, վոր սենյակում բնակվող ընկերները աշխատանքի ժամանակ խոսակցեն, գրքի վրա աշխատելու համար ընտրել այնպիսի ժամեր, յերբ փողոցի աղմուկը համեմատարար հանդարատվում ե, իսկ ընտանիքը քնած ե:

Բնակարանի ջերմությունը պետք ե լինի վոչ պակաս և վոչ ավելի՝ 14—17 սաստիճան — գրա-

նից պակաս ջերմությունը մարմինը կարող է սառեցնել (քանի վոր պարագելիս մարմինը շարժութեր չի կատարում) և նվազեցնել աշխատունակությունը (աշխատանքի վրա անդրադառնում ե մանավանդ վուների սառնությունը). ավելի բարձր ջերմությունը թուլացնում է, քննածություն և առաջ բերում և նվազեցնում ուղեղի մտածողական գործնեյությունը:

Մեր ուղեղի ընդհանուր զրության վրա ընթերցանության ժամանակ շատ ավելի մեծ ազդեցություն ունի թարմ ողբ: Մեկ մարդուն մեկ ժամում պահանջվում է 50—120 խորանարդ մետր ող (զա նորմալ չափն է). բայց մենք այնպիսի սուր պայմաններում ենք ապրում, վոր ողի այդպիսի քանակություն մեր բնակարանում ունենալ առայժմ չենք կարող. միակ յելքն է աշխատելու միջոցին վորքան հնարավոր ե բաց թողնել ողանցքը, կատեղորիկ կերպով արգելել վոր ուրիշները չխեն աշխատանքի սենյակում, իսկ աշխատողը ինքն ել պետք ե ըստ կարելույն կրծատի ծխելը (Այն կարծիքը թե ծխելը ողնում և ուղեղի մտածողական գործնեյությանը, անկասկած սխալ ե, նիկոտինի վորոշ զողան միայն ժամանակավորապես թմրեցնում է հոգնածությունը, բայց վոչ մի ողան կա մեղ չի տաշ-

(իս), գերչափես, պետք ե հաճախակի ժաքրել սենյակի ողը:

Քիչ թե շատ լուրջ կամ տեական աշխատանքի (գրքի վրա) միջոցին, հագուստը պետք ե լինի ըստ կարելույն արձակ, — գոտին և ոձիքը պետք ե արձակված լինեն և տոհասարակ չպիտի նեղացնեն պարագելիս: Հայտնի յե, վոր նստած զրությամբ (իսկ այդպիսի գրություն մենք ընդունում ենք պարագելիս) մեր մարմինը ստանում է այնպիսի ձե, վոր մեր ստամոքսային մասը առաջ մղվելով մեր մարմինն այդ մասում հաստանում է և զոտին, վոր մեր կանգնած զրությամբ մեղ ոգտակար ե, — մեր նստած զրությամբ նա մեզ արդեն վնասում է: Դրքի վրա յերկար աշխատելիս ավելի լավ ե կոշիկները բուլորվին հանել և զբանց փոխարեն հազնել սենյակի թեթե տուֆիներ (միայն վոչ կալոշներ, սեղինը վնասակար ե մեր վոտքերին):

Հարկավոր ուշադրություն պետք ե դարձնել նաև հետեյալի վրա. յերբ աթոռը շափազանց ցածր ե, վոտերդ ստիպված ես կծկել, — իսկ դա խանգարում ե արյան աղաւտ շրջանառությանը վոտքերում: իսկ յեթե աթոռը չափազանց բարձր ե լինում, — վոտքերը կախված են մնում ողում, իդուր վորոնում են հենարան, և մեջքի մկանները

ու ժգին լարվում են, վորպեսզի մարմինը պահպանեն ուղղահայց դրությամբ:

Աթոռն ու սեղանը վորի վրա պարապում ես, պետք ե համապատասխան լինեն հետեւյալ չափերն — սեղանի բարձրությունը — արմունկիզ բարձրությանը, աթոռի բարձրությունը — ծնկաչոքի բարձրությանը (հատակից):

Հնթերցանությանը հոգեբանորեն ավելի յենպաստում շարժումների ազատությունը և այն, վոր սեղանի վրա ավելորդ բաներ չկան. ուստի ընթերցանությունը սկսելուց առաջ ոդասկար և սեղանը կարգի բերել նրա վրա թողնելով միմիայն այն, ինչ անհրաժեշտ և լինելու ընթերցանության միջոցին (մատիտ, բառարան, դանակ, քանոն և այլն):

Հնթերցանությունից անմիջապես առաջ չպետք է շատ կուշտ ուտել վորովհետեւ դա կասեցնում և արյունը ուղեղից դեպի ստամոքսային մասը. ուղեղը վորոց չափով դրկվում է արյունից և ի վիճակի չի լինում ինչպես հարկն և ըմբռնել կարդացածք. թայց դա ի հարկե չի նշանակում, վոր պետք ե քաղցած փորով նստել կարդալու. Այդպիսի դրությունը նույնպես չի նպաստում աշխատունակությանը:

Շատ մեծ նշանակություն ունի ուշադրության համաչափության պահպանումն ընթերցանության ամբողջ միջոցին. Ուրեմն չպետք ե մեծ յեռանդ ծախսել ընթերցանության սկզբում. հարկավոր ե իրեն չոգնեցնել և համաչափ յեռանդով շարունակել ընթերցանությունը մինչև վերջը:

Վորպեսզի կարդալիս մարդ կարողանա ուշադրությունը կենալոնացնել (կողմնակի բաների մասին չմտածել և ընթերցանության միջոցին մեծագույն ուշադրություն տահպանել), ոգաակար և գրքի վրա աշխատել մատիտ ձեռքիդ և յերբեմն-յերբեմն կարդացածը պատմել ինքդ քեզ կամ ուրիշին:

Վերջապես, վերջին կանոնը. միանդամայն անթույլատրելի յի գիրքը կարդալ մինչ այն ժամանակ, մինչև վոր, ինչպես ասում են, աշքերդ մթնում են, գլուխդ պառույտ և գալիս և ընթերցողը դադարում և կարդացածը հասկանալ Մեկ, մեկ ու կես ժամից հետո պետք ե 10—15 րոպե դադար տալ, վորպեսզի հանգստանալ և որդանիզմից մասամբ հեռացնել հոգնածության թույնը, վոր կուտակվում և ընթերցանության ժամանակ. Բայց կարիք ել չկա շուտ-շուտ դադարեցնել ընթերցանությունը՝ իբր թե չոգնեցնելու համար, — ամեն անդամ, յուրաքանչյուր դադարից հետո պետք ե լինում մի քանի րոպե վատնել՝ պա-

ըապմունքի հունի մեջ մտնելու հաժար, նորը  
հնի հետ կապակցելու համար, իսկ դա զգալի չա-  
փով նվազեցնում ե աշխատանքի ընդհանուր  
արտադրողականությունը:

### III. ԽՆՁՊԵՍ ԱՇԽԱՏԵԼ ԳՐԹԻ ՅԵՎ ԼՐԱԳՐԻ ՎՐԱ

Կարդացած գիրքը և լրագիրը հետադայում ևս  
ոգտագործելու համար կան մի քանի միջոցներ,  
բայց այն ակտիվիստի համար, վորը ստիպված ե  
հաճախակի ոգտագործել գիրքն ու լրագիրը վոչ  
ինչպես ուսման պիտույք, այլ վորպես մատե-  
րիալ՝ հերթական յելույթի համար, — ամենից ոգ-  
տակարն ե այդ միջոցներից յերկուսի գործա-  
դրությունը. — Կարդալ մատիտը ձեռքին, գրքի  
կամ լրագրի մեջ նկատողություններ անելով, և  
գրքերից կամ լրագրերից հատվածներ գուրս գրե-  
լով, կամ լրտգրերից հարկավոր հատվածները  
կտրելով ու հավաքելով, և գրանք վորոշ սիստեմով  
դասավորել:

Կարդա մատիտը ձեռքիդ. Աշխատելու  
այդ ձեւ ոգտակար ե յերեք պատճառով. առաջին՝  
նա նպաստում ե մեր հիշողության տեսողական-  
մուռօյային (տեսողական-շարժական) զարգաց-  
մանը, յերկրորդ՝ նա սովորեցնում ե մեզ գրքում  
և լրագրում ջոկելու անհրաժեշտ և վոչ-անհրա-

ժեշտ նյութը, յերրորդ՝ այդ ձեւ սովորեցնում ե  
մեղ իր ժամանակին գրքի կամ լրագրի մեջ  
նշելու հարկավոր նյութը նրա համար, վորպեսզի  
ապագայում դյուրին ինի ոգտակելու այդ նյու-  
թերից. Ընթերցանության այդ ձեւից ոգտակելու  
համար անհրաժեշտ ե ամենից առաջ՝ պատաս-  
խանել յերկու հարցի. — մատիտը ձեռքիդ կար-  
դալիս իսկապես ինչ պետք ե նշանակես գրքում  
կամ լրագրում, և յերկրորդ՝ անհիմական ինչ-  
պես կատարել այդ նշանակումները:

Պատասխաննենք այդ հարցերին:

Ամեն մի գրքի (մենք այստեղ չենք խոսում  
գեղարվեստական գրքի մասին) և լրագրական  
հոգվածի մատերիալը սովորաբար բազկացած ե  
լինում հետեւյալ հինգ տարրերից — դատողու-  
թյուններ, որին ակներ, փաստեր, յեղ-  
րակացություններ և բնորոշումներ:

Այսպես են ամեն մի գրքի և լրագրական հոգ-  
վածի եկեմնաները, վոր անհրաժեշտ և սովորել  
տարբերելու: Մատիտը ձեռքիդ գրքի վրա աշխա-  
տելիս, ի հարկե, պետք չե նշանակել այդ բոլոր  
ելեմնաները, այլապես ամբողջ գիրքը կիսագ-  
խզվի և գրքում նշանակումներ անելու իմաստը  
կոռպչի: Պետք ե ջոկել միայն ավելի անհրաժեշտ  
արժեքավոր մատերիալը, այսինքն փաստերն ու

հետևությունները։ Դա, ի հարկե, չի նշանակում,  
վոր բոլորովին պետք ե հրաժարվել դատողու-  
թյուններն ու որինակներն ընդգծելուց — դա  
կախված ե մատերիալից։ Ավելի նաև ականա-  
մար ե՝ վերջնական ընդգծումներ անել յերկրորդ  
անգամ մատերիալը կարդալիս։ Այդ չի նշանա-  
կում, վոր ամբողջ մատերիալը պետք ե կարդալ  
յերկու անգամ, վոր հաճախ հնարավոր չե։ յերկ-  
րորդ անգամ կարդալ» — մենք ուզում ենք ասել  
վոր պետք ե ընտրություն անել գլխավորներից  
գլխավորը, իսկ այդ ընտրությունը կատարվում  
է հետեւյալ կերպով։ մատերիալը առաջին անգամ  
կարդալիս, լուսանցքում պետք ե մի նշան անել  
այն փաստերի, հետեւությունների, ընորոշումների  
դիմաց, փորոնք անհրաժեշտ ու կարենը են  
թվում ընթերցողին։ իսկ յերկրորդ անգամ կար-  
դացվում են հենց այդ նշանակած տեղերը։ Դրան-  
ցից պետք ե ընտրել ամենակարենը տողերը և  
դրանք ընդգծել կամ թե անհրաժեշտ հատված-  
ները ջոկելու համար մեծ փակագծերի մեջ առ-  
նել լուսանցքում վորեն պայմանական տառավ  
կամ բառով նշանակել։

Հետագայում այդ գրքից ոգտվելու և հարկավոր  
նյութը լսած կարելացն արագ գտնելու համար,  
անհրաժեշտ ե, վոր կարդացածի դանաղան իլե-

մենաները նշանակվելն զանազան նշաններով։  
Որինակ փաստերը կարելի յե նշանակել լու-  
սանցքներում քառակուսիներով և կողքին դնել  
«ի» տառը, հետեւությունները նշանակել ան-  
կյունավոր փակագծերով և կողքին դնել «հ»  
տառը, ընորոշումները ուղղակի ընդգծել ուղիղ  
գծով։ Ի հարկե, այդ բոլոր նշանները պարտա-  
դիր չեն, ամեն մի ընթերցող ընտրում ե իր  
նշանները, բայց յերբ մեկ անգամ ընտրում ե,  
պետք ե միշտ ել ոգտավի այդ նշաններով, վոր-  
պեսզի ինքը իրեն չփոթի։

Դրքերից ու լրագրերից հատված-  
ներ ու ցիտատներ անց կացնել թեր-  
թիկների վրա։ Դրքի կամ լրագրի վրա աշ-  
խատելիս յերբ ընտրում են օթերթիկների սիս-  
տեմա — պետք ե նկատի ունենալ հետեւյալ յերկու  
մոմենտները։ — մատերիալի ընտրությունը՝ թեր-  
թիկների մեջ մտցնելու համար և այդ թերթիկ-  
ները լրացնելու ու պահելու տեխնիկան, ամե-  
նորյա աշխատանքի համար այդ թերթիկներից  
ոգտվելու համար։

Մատերիալի ընտրությունը — շատ կա-  
րենը ե։ Թերթիկների սիստեմով ոգտվելիս պետք  
ե խիստ զգույշ լինել — չըրապուրվել թերթիկ-  
ների քանակով։ Զպետք ե մոռանալ, վոր այդ

թերթիկները իրենցից յերբեք չեն ներկայացնում  
ամբողջ կարգացածի կրծոտ շարադրությունը —  
նրանք տալիս են տվյալ թիմայի միայն հիմ-  
նական ու կարևոր մտքերն ու փաստերը Ռւսակի  
և չափազանց զգուշությամբ պետք է ընտրել այն  
նյութը, զոր պետք և անցկացվի թերթիկների  
վրա, ամբողջ աշխատանքի մեջ դա ամենապա-  
տասխանատու մոմենտն է կազմում:

Նախքան աշխատանքի անցնելը, պետք է ճիշտ  
վորոշել, թե ինչ նպատակով և ընտրվում այն  
մատերիալը, վոր պետք և անցկացվի թերթիկ-  
ների վրա. 1) արդյոք պետք և այդ մատերիալը  
հարցերի ամբողջ եյտությունը տա, կամ միայն,  
իր մտքերը ավելի հեղինակավոր կարծիքներով  
հաստատելու համար, տա լոկ կարևորագույն ցի-  
տատներ. 2) Թերթիկներ կազմողը ձգտում է  
տալ միայն մեկ հեղինակի տեսակետները, թե  
ընդհակառակը՝ ցանկանում է մի քանի հեղինակ-  
ների մտքերը տվյալ հարցի մասին հակագրել  
միմյանց. 3) Արդյոք պետք և ճշգրիտ դոկո-  
մենտ (ցիտատ), թե բավական և ազատ փո-  
խադրությունը (իը նկատողությունները):

Մատերիալի ընտրության նպատակը վորոշե-  
լուց հետո միայն, պետք է սկսել մատերիալի  
ընտրությունը: Իհարկե, չպետք և թերթիկների

վրա անցկացնել առաջին հանդիպած նախադա-  
սությունը կամ թիվը, թեև զրանք վերաբերում  
են թերթիկները կազմողի գրած նպատակին. չե  
վոր նույն այդ գրքի մի ուրիշ տեղում կարող ե  
պատահել, վոր հարկավոր միտքը արտահայտված  
կլինի շատ ավելի լավ ձևով, և կամ մի ուրիշ  
աղբյուրից վերցրած նյութը ամբողջովին կարող  
ե ավելորդ դարձնել այդ աշխատանքը, ուստի և  
հարկավոր նյութի ընտրությունը և թերթիկների  
վրա անցկացնելը պետք է կատարել յերկրորդ  
անգամ կարգալիս, այսինքն առաջին անգամ  
կարգալիս արած նշանակումները աչքի անցկա-  
ցնելիս (ինչպես բացարեցինք քիչ վերև):

Իհարկե, թերթիկի վրա կարող են անցկաց-  
վել վոչ միայն բառային, այլև թվական մատե-  
րիալ, այդ մատերիալաները կարող են արտա-  
հայտված լինել վոչ միայն գրով, այլև գծագրու-  
թյամբ, դիագրամներով: Հարկավոր հատվածներ  
լրագրերից պետք չե արտագրել այլ տղղակի  
կտրել ու կպցնել թերթիկներին:

Թերթիկների վրա անցկացվելիք հատվածները  
չպետք է յերկար լինեն, պետք և տալ համառոտ,  
զիսավոր մտքերն ու փաստերը միայն: Յերկար  
մեջբերություններից ավելի դժվար ե ոգտվել, յերկար  
ցիտատները առողջիտորիային ձանձրացնում են

զեկուցման ժամանակ: Մեջբերումներ կատարելիս,  
իհարկե, պետք ե խիստ զգույշ լինել, հեղինա-  
կին չաղավաղել, նրան չվերագրել այնպիսի  
միտք, վոր նա չէ հայտնել:

Թերթիկներ կազմելիս առհասարար չպետք ե  
ընկնել ցիտատների յետևից։ Ինարկե, հեղինակի  
միտքը արտահայտել նրա խոկ խոռքերով — հետ  
ու հանգիստ բան ե. բայց դա չի վարժեցնում ինք-  
նուռույն մտածողությունը։ (Զեկուցումը չպետք ե  
ծանրաբեռնել ցիտատներով):

Ի ն չ պ ե ս լ ը ա ց ն ե լ թ ե ր թ ի կ ն ե ր ը .  
Դ ր ա ն ք պ ե տ ք ե բ ա վ ա ր ա ր ե ն հ ե տ ե յ ա լ պ ա հ ա ն ջ -  
ն ե ր ի ն — թ ե ր թ ի կ ը պ ե տ ք ե լ ի ն ի (մ ի թ ա բ ա ղ ա -  
թ ղ թ ի <sup>1/8</sup> մ ե ծ ու թ յ ա մ բ ) բ ա վ ա կ ա ն ա շ ա փ ի հ ա ս տ  
թ ղ թ ի ց , զ ո ր պ ե ս դ ի չ ծ ա լ ծ լ վ ի , ս ա կ ա յ ն ա յ ն պ ի ս ի ն ,  
զ ո ր ի վ ր ա կ ա ր ե լ վ ի ն ի գ ր ե լ թ ա ն ա ք ո վ :

Ահա այդ թերթիկը. (տես 39 էջ):

Վերջապես մի քանի նկատողություններ թերթիկների կլասիֆիկացիայի, նրանց պահպանման ու նրանցից ռդումվելու մասին:

Գործը վորքան պարզ դրված լինի, այնքան  
լավ՝ վերցնել մի սոլորական պատկա, գրա վրա  
գրել հիմնական թեմայի անվանումը. այդ պատ-  
կայի մեջ պահպելու յեն համապատասխան գրան-  
ցութիւնը ու ցիտատները Յենթաթեմաները ավելի

№ .....  
Թեսաւ .....  
Հեղինակ .....  
Գլոբի անհնալ .....  
Հրատ. ..... հջ  

---

  
Ծանոթություն  
}

ւավ ե նշանակել ծրաբի վըս, վորի մեջ կպահվեն  
այդ յենթաթեմային վերաբերող թերթիկները,  
իհարկե, համապատասխան ցիտատներով կամ նշա-  
նակումներով լրացրած, ժամանակ առ ժամանակ  
այդ ծրաբներից յուրաքանչյուրի թերթիկները  
պետք ե վերանայել, կարգի բերել Հարկավոր  
դեսքերում վորոշ թերթիկներ վոչնչացվում են  
և փոխարինվում ուրիշ թերթիկներով, յերբեմ  
ել վոչնչացվում են ամբողջ ծրաբներ, բայց կա-  
րելի յե համոզված ասել, վոր հավաքած նյութը  
(թերթիկների սիստեմով) մեծ ծառայություն ե  
ժամանակ:



10 400.

22553

Цена 10 көп.

О. П. 12.



---

И. РЕБЕЛЬСКИЙ  
Техника умственного  
труда  
(перев. с русск.)

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10